ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/25

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2018թ. թիվ 03/26-3/2180-18 գրությամբ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 07.02.2018թ. թիվ ԴՎԱ/436 գրության հիման վրա, 2609.02.2018թ. թիվ 03/26-3/2180-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն 28.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ հիմքեր առկա չեն ընկերությանը Ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի միջև 2017թ, հունիսի 9-ին կնքվել է ապրանքի մատակարարման պետական գնման թիվ «ՇՀԱՊՁԲ-9/8-2» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված թիվ 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված թիվ 3):

Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացուցի համաձայն՝ ընկերությունը պետք է մատակարարեր տարբեր տեսակի բժշկական պարագաներ՝ այդ թվում ցիստաստոմաի կատետր և կոննեկտոր շնչառական:

Պայմանագրի թիվ 3 հավելվածի, վճարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները պետք է մատակարարվեն 2017թ. չորրորդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.:

ՀՀ պաշտպանության նախարարության 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/436 գրության համաձայն՝ պատվիրատուն հիմք ընդունելով պայմանագրի 3,1,7 և 3,1,7,1 կետի «բ» ենթակետը՝ 2018թ. հունվարի 29-ից՝ ցիստաստոմաի կատետր և կոննեկտոր շնչառական ապրանքատեսակի մասով միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման

գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոհիշյալ իրավական և փաստական հանգամանքներից, Ընկերությունը գտնում է, որը «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, այն է՝ չի մատակարարել պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ցիստաստոմայի կատետր և կոննեկտոր շնչառական ապրանքատեսակը, պայմանագրի թիվ 3 հավելվածով նախատեսված ժամկետում, ինչի հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/436 գրությամբ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծարել է, իսկ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է Խորհրդին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել՝ ընկերությանը չներառել ցուցակում:

«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.02.2018թ. ժամը 10:30-ի և 23.02.2018թ. ժամը 11:45-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/436 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի միջև 13.06.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-9/8-2 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 29-ից միակողմանի՝ «Ցիստաստոմաի կատետր» և «Կոննեկտոր շմչական, գոֆրեյային 100/590/000 Portex կամ համարժեք» ապրանքատեսակների մասով լուծել է վերը նշված պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնելով, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 05.02.2018թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 16.02.2018թ. ժամը 10:30-ի և 23.02.2018թ. ժամը 11:45-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/25 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2018/25 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի միջև 13.06.2017թ. կնքվել է ՇՀԱՊՁԲ-9/8-2 ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված թիվ 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված թիվ 3):

3. Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատակարարեր անզգայացման գործիքներ, դիմակներ, վերակենդանացման գործիքներ, այդ թվում՝

- 29-րդ չափաբաժնի մասով - ցիստաստոմայի կատետր,
- 65-րդ չափաբաժնի մասով – ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 6,5 Portex 100/199/065 կամ համարժեք,
- 66-րդ չափաբաժնի մասով՝ - ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 7,0 Portex 100/199/070 կամ համարժեք.
- 67-րդ չափաբաժնի մասով՝- ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 7,5 Portex 100/199/075 կամ համարժեք,
- 68-րդ չափաբաժնի մասով՝- ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 8,0 Portex 100/199/080 կամ համարժեք,
- 69-րդ չափաբաժնի մասով՝- ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 8,5 Portex 100/199/085 կամ համարժեք,
- 70-րդ չափաբաժնի մասով՝- ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 9,0 Portex 100/199/090 կամ համարժեք,
- 104-րդ չափաբաժնով - կոննեկտոր շնչական, գոֆրեային 100/590/000 Portex կամ համարժեք:

4. Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները պետք է մատակարարվեն 2017թ. երրորդ եռամսյակում և չորրորդ եռամսյակում /ոչ ուշ քան 30.11.2017թ./:

5. ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/436 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի միջև 13.06.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-9/8-2 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 29-ից միակողմանի՝ «Ցիստաստոմայի կատետր» և «Կոննեկտոր շմչական, գոֆրեյային 100/590/000 Portex կամ համարժեք» ապրանքատեսակների մասով լուծել է վերը նշված պայմանագիրը:

5.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2018թ. թիվ 03/26-3/2180-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/436 գրությունը՝ կից փաստաթղթերով և «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի 28.02.2018թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ*** (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) ***կատարելը»:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի միջև 13.06.2017թ. կնքվել է ՇՀԱՊՁԲ-9/8-2 ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված թիվ 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված թիվ 3):

Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատակարարեր անզգայացման գործիքներ, դիմակներ, վերակենդանացման գործիքներ, այդ թվում՝

- 29-րդ չափաբաժնի մասով - ցիստաստոմայի կատետր,
- 65-րդ չափաբաժնի մասով – ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 6,5 Portex 100/199/065 կամ համարժեք,

• 66-րդ չափաբաժնի մասով՝ - ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 7,0 Portex 100/199/070 կամ համարժեք.

• 67-րդ չափաբաժնի մասով՝- ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 7,5 Portex 100/199/075 կամ համարժեք,

• 68-րդ չափաբաժնի մասով՝- ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 8,0 Portex 100/199/080 կամ համարժեք,

• 69-րդ չափաբաժնի մասով՝- ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 8,5 Portex 100/199/085 կամ համարժեք,

• 70-րդ չափաբաժնի մասով՝- ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 9,0 Portex 100/199/090 կամ համարժեք,

• 104-րդ չափաբաժնով - կոննեկտոր շնչական, գոֆրեային 100/590/000 Portex կամ համարժեք:

Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները պետք է մատակարարվեին 2017թ. երրորդ եռամսյակում և չորրորդ եռամսյակում /ոչ ուշ քան 30.11.2017թ./:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/436 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի միջև 13.06.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-9/8-2 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 29-ից միակողմանի՝ «Ցիստաստոմաի կատետր» և «Կոննեկտոր շնչական, գոֆրեային 100/590/000 Portex կամ համարժեք» ապրանքատեսակների մասով լուծել է վերը նշված պայմանագիրը:

«Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն 28.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից չի մատակարարվել պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ցիստաստոմաի կատետր և կոննեկտոր շնչառական ապրանքատեսակները, ինչի հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/436 գրությամբ պայմանագիրը միակողմանի վերը նշված ապրանքատեսակների մասով լուծարել է:

Վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագրի 3-րդ կետի 3.1.7 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել

Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Նույն կետի 3.1.7.1 ենթակետի համաձայն՝ ***Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որի չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն թույլ է տվել ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի միջև կնքված «ՇՀԱՊՁԲ-9/8-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, քանի որ Ընկերությունը չի մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված «Ցիստաստոմայի կատետր» և «Կոննեկտոր շմչական, գոֆրեյային 100/590/000 Portex կամ համարժեք» ապրանքատեսակները, Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում:

Միևնույն ժամանակ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը***:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, ուստի Խորհուրդը գտնում է, որ թույլ տրված խախտումը դեռևս բավարար հիմք չէ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված կարգով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2018թ. թիվ 03/26-3/2180-18 գրությամբ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01564583) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ